ԿՐԹԱԿԱՆ

# ԻՆՉՊԵ՞Ս ԿԸՆԹԱՆԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, 2020-2021 ուսումնական տարվա մեկնարկի համար Վրաստանի ԿԳ նախարարությունը, Առողջապահության նախարարության հետ միասին, մշակել է հատուկ հանձնարարականներ: Առկա հանձնարարականների հիման վրա՝ 2084 հանրային դպրոցում նոր ուսումնական տարին դասասենյակներում կմեկնարկի սեպտեմբերի 15-ից:***

Առողջապահության նախարարության կանոնակարգերն են.

* Աշակերտների միջեւ 1 մետր հեռավորություն:

* Շենք մուտք գործող բոլոր անձանց դիմակի պարտադիր կրում, բացի աշակերտներից:

* Շենք մուտք գործելուց առաջ՝ ցանկացած անձի ջերմաչափում եւ ձեռքերի ախտահանում:

* Դիմակների պահուստային առկայություն դպրոցներում:

* Զուգարանների սանիտարական մշակում ամեն դասամիջոցից հետո:

* Կես ժամանոց ընդմիջում հերթափոխների միջեւ, դասասենյակների եւ դպրոցի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մշակում եւ օդափոխում:

* Ջերմում եւ շնչառական ախտանիշներ ունեցող աշակերտների համար՝ ժամանակավոր մեկուսացման սենյակի հատկացում:

* Դասասենյակների օդափոխում դասամիջոցների ընթացքում:

* Դպրոցի ընդհանուր օգտագործման տարածքներում՝ միջանցք, ուսուցչանոց, աստիճան, տեղաշարժվող բոլոր անձինք, բացի աշակերտներից, պետք է դիմակ կրեն:

Վերոնշյալ կարգավորումները հաշվի առնելով՝ ԿԳ նախարարությունը դպրոցներին թույլ է տալիս ծրագրել ուսումնական գործընթացը: Դպրոցներն ուսումնական գործընթացի ծրագրման ժամանակ հնարավորություն կունենան.

* Որոշել դասընթացների տեւողությունը (նվազագույնը՝ 30 րոպեանոց դասընթացներ):

* Որոշել դասընթացների մեկնարկի ժամանակը՝ ըստ դասարանների (ժամը՝ 08:30-ին, 08:45-ին, 09:00-ին):

* Որոշել եւ կազմակերպել հերթափոխը:

* Անհրաժեշտության դեպքում մեկ հերթափոխով աշխատող դպրոցներն անցնեն մի քանի հերթափոխի:

* Դպրոցներում, աշակերտների անվտանգության նկատառումներից ելնելով, ներմուծել խառը ուսուցման մեթոդ (ուսուցում ինչպես դասասենյակներում, այնպես էլ՝ հեռավար):

* Դպրոցները չծանրաբեռնելու նպատակով՝ կարելի է օգտագործել նաեւ շաբաթ օրը:

ԿԳ նախարարության որոշմամբ՝ I-IV դասարանների աշակերտների համար ուսումնական գործընթացը դասասենյակներում անցկացնելը պարտադիր է:

Անհրաժեշտության դեպքում խառը մոդելի կիրառման դեպքում V-VI դասարաններում հեռավար ուսուցում հնարավոր կլինի շաբաթական առավելագույնը 1 անգամ, VII-XI դասարանների համար՝ առավելագույնը շաբաթական 2 անգամ, իսկ XII դասարանի համար՝ առավելագույնը 3 անգամ:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*




COVID-19

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ՄՈՏ 23 ՄԻԼԻՈՆ ՎԱՐԱԿՎԱԾ, 15 ՄԻԼԻՈՆ ՈՒ ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻ ԱՊԱՔԻՆՎԱԾ

***Աշխարհում կորոնավիրուսի վարակի՝ COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 22 885 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 797 485 հազարը: Ապաքինվել է 15 միլիոն 534 674 մարդ:***

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում գտնվող **ԱՄՆ-ում 5 746 534** հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **177 438** է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Երկրորդ տեղում **Բրազիլիան է**, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **3 505 097-ի**, մահացածներինը՝ **112 423-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Հնդկաստանն է**, որտեղ վարակվել է **2 910 032** մարդ, մահացել՝ **55 002-ը**: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **946 976**, վարակի հետեւանքով մահացել՝ **16 189** մարդ:

**Հարավային Աֆրիկայում** վարակվել է **599 940**, վարակի հետեւանքով մահացել՝ **12 618** մարդ: **Պերուում** վարակվել է **567 059**, վարակի հետեւանքով մահացել՝ **27 034** մարդ: Պերուին հաջորդում են Մեքսիկան, Կոլումբիան, Իսպանիան եւ տասնյակը եզրափակում է Չիլին:

**Հայաստանում**, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **42 477**-ի, մահացածներինը՝ **842**-ի, ապաքինվածներինը՝ **35 693**-ի:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը կազմում է **34 759** մարդ: Վարակից մահացել է **510**, ապաքինվել՝ **32 511** մարդ:

Օգոստոսի 14-ի տվյալներով՝ **Վրաստանում** վարակվել է **1 385** մարդ, մահացել՝ **17-ը**, ապաքինվել՝ **1128-ը**:

# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ՝ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԲԱՐԴ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

COVID-19 հիվանդությունը, որն առաջանում է նոր կորոնավիրուսից, իրենից ներկայացնում է ամենածանր մարտահրավերներից մեկը համաշխարհային առողջապահության համար: Այդ մասին օգոստոսի 18-ին Ժնեւում կայացած ճեպազրույցում հայտարարեց Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գլխավոր տնօրեն Թեդրոս Ադանոմ Գեբրեյսուսը:

- Ցանկացած նոր հիվանդության բռնկում ներկայացնում է նոր մարտահրավեր, սակայն, լոգիստիկայի տեսակետից, COVID-19-ը դարձել է ամենածանր մարտահրավերներից մեկը, որը երբեւէ ծառացել է մեր առջեւ,- ասաց նա:

# ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ԲՈԼՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԻԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՎԵՐԱՑՈՒՄՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է »

***Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն, խոսելով երկրում կորոնավիրուսի դեմ պայքարի միջոցառումների մասին, անդրադարձավ նաեւ միջազգային կանոնավոր չվերթերի՝ մինչեւ սեպտեմբերի 30-ը սահմանափակումների երկարաձգման հարցին:***

Նրա խոսքով՝ դա զարմանալի չէ, քանի որ Եվրոպայում էլ չվերթերի շարժունակությունը կրճատվել է 60-70 տոկոսով:

Գամղրելիձեի խոսքով՝ բոլոր սահմանափակումների միանգամից բացառումն անթույլատրելի է: Սահմանափակումների լրիվ վերացումը կարող է հանգեցնել չկանխատեսվող հետեւանքների:

- Այս փուլում երկրում համավարակային իրավիճակը կառավարելի է, եւ դա վերջին ամիսների ընթացքում ձեռնարկված միջոցների արդյունքն է: Միանգամից բոլոր սահմանափակումների վերացումը անթույլատրելի է, դա կարող է հանգեցնել անկախատեսելի հետեւանքների,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՐԱՆՏԻՆԻ ԺԱՄԿԵՏԸ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ Է 14-ԻՑ ՄԻՆՉԵՎ 12 ՕՐ

***Վրաստանի կառավարությունը, ելնելով միջգերատեսչական համակարգող խորհրդի հանձնարարականներից, որոշում է ընդունել՝ երկրում կարանտինի եւ ինքնամեկուսացման ժամկետը 14 օրվա փոխարեն, սահմանել 12 օր:***

Ըստ որոշման՝ արտասահմանից ժամանած կամ կորոնավիրուսի վարակակիր անձի հետ շփում ունեցած բոլոր մարդիկ, ինչպես նաեւ Վրաստանի բռնազավթված տարածքներից տեղափոխված անձինք, կանցնեն 12-օրյա կարանտին:

Ինքնամեկուսացման մեջ անձը պետք է անցկացնի 12 օր: Կարանտինից ինքնամեկուսացում կամ ինքնամեկուսացումից կարանտին տեղափոխվելու դեպքում՝ ինքնամեկուսացման/կարանտինի օրերից կհանվի ինքնամեկուսացման/կարանտինի մեջ անցկացված օրերի թիվը:

Վրաստան մուտք գործելիս՝ ինքնամեկուսացման/կարանտինի ենթակա չեն Վրաստանի կառավարական եւ նախագահական պատվիրակությունները:

Վրաստան ժամանած պաշտոնական պատվիրակությունների անդամները սահմանային անցակետում պետք է ներկայացնեն, նախքան պաշտոնական այցը, վերջին 72 ժամվա ընթացքում անցկացրած «PCR» հետազոտության փաստաթուղթ:

ՆՈՐ ՏԵՍԱՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ՆՈՐ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԵՎ ԱԶԱՏԻ ՈՒ ՍԱՄՎԵԼԻ ՄԱՍԻՆ

***Թբիլիսցի կինոռեժիսոր եւ օպերատոր Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության ջերմ երկրպագու Գիա Ալավիձեն, որը հանրությանը ծանոթ է Խոսե Մաջիներե անունով, գրեթե երկու տասնյակ ֆիլմեր է նկարահանել Սերգեյ Փարաջանովի մասին: Ռեժիսորը միշտ ափսոսանքով է խոսել այն մասին, որ իրեն երբեք չի վիճակվել կենդանության օրոք շփվել 20-րդ դարի մեծագույն կինոռեժիսորի հետ: Ուստի, բոլոր նրանք, ովքեր բարեկամություն են արել նրա հետ կամ ինչ-որ կերպ նրանց ուղիները խաչվել են, անմիջական հետաքրքրություն են առաջացնում ռեժիսորի մեջ: Իր տեսահարցազրույցներում Խոսեն գրանցում է այն ամենը, ինչ զրուցակիցները պատմում են Փարաջանովի մասին:***

Մի քանի օր առաջ մենք, Գիա Ալավիձեի հետ միասին, եղանք մայրաքաղաքի Հավլաբար կոչվող թաղամասում՝ տեղի բնակիչ Սամվել Հարությունյանից հարցազրույց վերցնելու նպատակով: Ներկայումս նա կենսաթոշակառու է, ժամանակին աշխատել է արդյունաբերության ոլորտում, թեպետ երբեք անտարբեր չի եղել արվեստի նկատմամբ: Մեկ անգամ Սերգեյ Փարաջանովը լուսանկարվելու համար եկել էր արժանահիշատակ, թատրոնի մեծ սիրահար, լուսանկարիչ Ազատ Մանուկյանի՝ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դիմաց գտնվող լուսանկարչական սրահը: Այնտեղ ճակատագիրը Սամվելին հնարավորություն ընձեռեց ծանոթանալ մեծ ռեժիսորի հետ եւ հարցնել՝ չի ցանկանո՞ւմ, արդյոք, ֆիլմ նկարահանել Հայաստանում՝ նվիրված «Սասունցի Դավիթ» հայկական էպոսի հերոսին: Ռեժիսորը, պատասխանեց, որ, ցավոք, նման ֆիլմի նկարահանման համար կպահանջվի առնվազն 300 հեծյալ. «... ինչպե՞ս կարող եմ հավաքել այդքան մարդ...»:

Խոսե Ալավիձեի համար էլ Սամվելի հետ հանդիպումը շատ օգտակար եղավ: Զրույցը տարվեց նրա տանը, որպես պարահրապարակ ձեւավորված երկրորդ հարկում, որը, իմիջիայլոց, ուրախությամբ զիջեց թբիլիսյան հայտնի պարուհի ու պարուսույց՝ Սվետլանա Երիցյանը:

Զրույցին Խոսեն ցանկություն հայտնեց լինել Ազատ Մանուկյանի՝ Թբիլիսիում հայտնի լուսանկարչական սրահում: Այսօր այն փակ է, շինությունը վթարային վիճակում է: Բարեբախտաբար, շատ լուսանկարներ պահպանվել են, այդ թվում՝ Փարաջանովի մեծ լուսանկարը՝ անձնական ստորագրությամբ: Լուսանկարչի թոռը՝ Ազատը, սիրով հնարավորություն ընձեռեց նկարահանել այն ամենը, ինչ վերաբերում է Հավլաբարի այդ տեսարժան վայրին:

Հավլաբարում Խոսեի հաջորդ զրուցակիցը դարձավ Յուրի Յադոյանը, ով Փարաջանովի հետ շփում է ունեցել Երեւանում: Նա մանրամասն պատմեց այն օրերի մասին, որոնք անցկացրել է ճաղերի ետեւում, ու թե ինչպես իրեն ընդունել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը, նվիրել մատանի... Յուրին եղել է նաեւ ռեժիսորի հուղարկավորությանը: Մասնակիցը դարձել այն բազմամարդ շղթայի, որն ուղեկցել է նրան դեպի վերջին հանգրվան՝ Կոմիտասի անվան պանթեոնում:

Խոսե Մաջիներեի Հավլաբարում նկարահանած բոլոր նյութերը կմոնտաժվեն եւ ուրախությամբ հայտնենք, որ կտրամադրվեն հանրության վայելմանը:

*ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ*

ՎԱՀԵ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ - 75

# ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՎԱՀԵ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ...



Հայ թատրոնի մեծ զավակ, նվիրյալ, ուսուցիչ, թբիլիսյան պետհայդրամայի թատրոնի ու նաեւ մեր՝ վիրահայոց համայնքի հավատարիմ ու սրտացավ բարեկամ, շնորհավոր հոբելյանական յոթանասունհինգդ:

Որքա՜ն դժվար ճանապարհ ես անցել, հարթելով այն մինչեւ Երեւանի Գ.Սունդուկյանի անվան Մայր թատրոնի տնօրեն ու գեղարվեստական ղեկավար, Հայաստանի ժողովրդական արտիստ: Ու որքան էլ բարդ ու խրթին, երբեք չես նահանջել ու մշակույթ կերտողի էությանդ երբեք չես դավաճանել՝ քո արժեքավոր ու հարամնա գործերով, որոնք սիրել ու սրտատրոփ սպասել է հանդիսատեսը՝ ոչ միայն Հայաստանում, այլեւ նրա սահմաններից դուրս: Ու հիշվել է դրանցից յուրաքանչյուրը, հիշվել իր լեփ-լի դահլիճով ու անշլագով՝ Թբիլիսիում, ամենուր... Քո դպրոցն անցած ավագ ադամյանցիներս երբեք չենք մոռանալու անցած դարի 90-ականներին քո բեմադրությամբ ու մեր մասնակցությամբ Արտաշես Քալանթարյանի «Այս տունը վաճառքի ենթակա չէ» ներկայացումը»... Սա մեծ պատիվ էր, դպրոց ու բոլորովին նոր աշխարհ յուրաքանչյուրիս համար, որովհետեւ երեւակայական քո թռիչքը միշտ ժամանակի հետ է քայլել՝ անցյալ, ներկա ու համոզված ենք, գալիք օրերում: Ու մենք այդ երանելի հնարավորության մեջ նորից դասեր քաղելու ցանկություն ունենք: Ուստի, մեր նոր ու շքեղ թատրոնում, առաջինը որպես բեմադրիչ, հենց քե'զ ենք վայելելու: Քո անզուգական ձեռագրով նորովի կերտելու ես, համոզված ենք, շատ տեսարժան ու անմոռաց սունդուկյանական «Պեպո»՝ այս անգամ երիտասարդ ադամյանցիների վաղվա օրը նոր գույնով օծելու ու մեր բարեկամությունը անխախտ պահելու համար:

Շարունակիր արարել, սիրելի Վարպետ: Դու միշտ այնտեղ ես, ուր քո անհրաժեշտությունը կա: Այդ տեղն այս պահին քո հայրենի Վանաձորում է, Հ.Աբելյանի անվան թատրոնում՝ որպես առատ հունձք կուտակած գեղարվեստական ղեկավար: Արդ, շարունակիր նմանը չունեցող վրձնի գույնովդ զարդարել հայ բեմը: Շարունակիր կրթել նոր սերունդներ ու փոխանցել այն, ինչ թերեւս ոչ մի տեղ չենք սերտել-կարդալ-տեսնելու: Ու թող որ քո նման շնորհաշատ ու տաղանդավորները շա՜տ լինեն...

*ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ*
*Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար*

***«Վրաստան» թերթի բարեկամ, թանկագին Վահե Շահվերդյան, սիրով միանում ենք շնորհավորանքներին, մաղթելով լավագույնը: Մեր ցանկությունն է, որպեսզի երկար ու ծիգ տարիների առանցքում մշտապես առողջ ու ինքնաբավ, շարունակաբար նոր ու հետաքրքիր տեսլականով հանդիպենք Թբիլիսիի թատրոններում ու մեր թերթի էջերում, երջանկությունն անպակաս Ձեր շեմ ու օջախից:***

ՆՈՐՈՒՅԹ

# TBC ԿՈՆՑԵՊՏ՝ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՈՐ ԴՐՈՒՅԹ

***TBC կոնցեպտի բանկային անհատական սպասարկման նոր դրույթը նախատեսում է՝ սպառողներին ընձեռել սպասարկման ցանկալի հավաքածուն ընտրելու հնարավորություն:***

TBC կոնցեպտի նպատակն է՝ անհատականորեն մարդկանց համար մատչելի բարձրորակ սպասարկում, որը համապատասխանեցվում է նրանց ցանկություններին ու կենսաձեւին: Բանկային անհատական սպասարկման նոր մոդելը կտնտեսի սպառողների ժամանակը, նրանց համար առավել նշանակալի նպատակների՝ գործունեության, սիրելի աշխատանքով անձանց հետ ժամանակ անցկացնելու ուղղությամբ:

- TBC-ի բանկային անհատական սպասարկումն արդեն երկրորդ տասնամյակն է, ինչ առաջ է ընթանում եւ մշտապես զարգանում է սպառողների պահանջներին համապատասխան: Համաշխարհային միտումները եւ վերջին իրադարձությունները հստակորեն ցույց տվեցին ինչպես թվային եւ հեռավար ալիքների նշանակությունը, այնպես էլ՝ մարդկանց հետ հարաբերությունների արժեքը: Ուստի, TBC-ի բանկային անհատական սպասարկումն առավել գործուն, կոնկրետ կարիքների վրա կողմնորոշված եւ անհատականացված դարձնելու համար, մշակվել է սպառողների հետ հարաբերությունների նոր ձեւաչափ ու դրանցից ամենագործունը առաջարկվում է դուրսգրման, այսպես կոչված, subscription մոդելը, ինչը, այս սույն դրույթով, մարդկանց ընտրության հնարավորություն է ընձեռում ինքնուրույն որոշել՝ ինչ է անհրաժեշտ եւ, ելնելով դրանից, ընդունել սպասարկումներն իրենց ցանկալի հավաքածուի տեսքով,- հայտարարեց TBC բանկային անհատական սպասարկման ղեկավար Նատա Խուրցիձեն:

Ներկա փուլում TBC կոնցեպտը միավորում է պրեմիում եւ թվային հավաքածուները, թեպետ տրանսֆորմացիան նախնական փուլում է: TBC-ի բանկային անհատական սպասարկման թիմն ակտիվորեն աշխատում է, որպեսզի սպառողներին առաջարկի այնպիսի նորամուծություններ, որոնք է'լ ավելի կդյուրացնեն առօրյա գործունեությունը:

TBC կոնցեպտի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու համար՝ սպառողը պետք է կապվի անմիջականորեն բանկի կամ կոնցեպտի կենտրոնի հետ (032 2 27 27 00):

Իսկ մինչ այդ TBC կոնցեպտի վերաբերյալ տեսագրությանը կարող եք ծանոթանալ https://www.facebook.com/tbcconcept/posts/3469734803092059 կայքով:

# ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԲԱՑՎԵՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ «ՄԱԿԴՈՆԱԼԴՍԸ»

***«Մակդոնալդս-Վրաստանը», TBC-ի եւ Եվրոպայում վերակառուցման եւ զարգացման բանկի աջակցությամբ, Թբիլիսիում երկու նոր օբյեկտ բացեց: Դա «Մակդոնալդսի» կողմից 2020 թվականին Եվրոպայի ողջ տարածքով բացված առաջին օբյեկտն է: «Մակդոնալդսի» նորագույն ռեստորանները սպասարկումներ կմատուցեն մայրաքաղաքի երկու գլխավոր մուտքերում՝ Դավիթ Աղմաշենեբելու եւ Կախեթիի խճուղիներում:***

«Մակդոնալդսի» հետ միասին, նոր ռեստորաններում սպասարկում է առաջարկում նաեւ «Մակկոֆեն», որը Պրեմիում սուրճ եւ աղանդեր կմատուցի: Այդ երկու ռեստորանները սպասարկումները կմատուցեն շուրջօրյա պայմանակարգով:

«Մակդոնալդսի» երկու նոր ռեստորանները նախատեսված են շուրջ 160 հյուրերի ընդունման համար եւ ներառում են ինչպես բացօթյա, այնպես էլ՝ դարավանդային տեսակի բաց տարածքներում: Ռեստորանում ներդրված են նորարական բոլոր սպասարկումները, որոնք ընդգրկում են նոր տեխնոլոգիաներն ու հյուրերի սպասարկման առավել դյուրացված ու կատարյալ մոդելը: Հյուրերը հնարավորություն ունեն օգտվելու ինչպես պատվերների սարքից, այնպես էլ՝ պատվերը տեղ հասցնելու սպասարկումից, որը նախատեսում է պատվերը ցանկացած սեղանին ընդունելը: Ռեստորանի ենթակառույցը լրիվությամբ հարմարեցված է սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար: «Մակդոնալդսի» երկու նոր ռեստորանների շինարարության համար իրականացվել է ավելի քան 25 միլիոն լարիի ներդրում:

«Երկրում, չնայած համավարակով պայմանավորված ճգնաժամին, «Մակդոնալդսը» շարունակում է ակտիվ գործունեություն: Նոր ռեստորանների բացմանը մենք կարողացանք ստեղծել 150 նոր աշխատատեղ: Իրականացրինք լուրջ ներդրումներ, համավարակի պայմաններում համաշխարհային ճգնաժամ է, էկոնոմիկայի հզորացումը մեր երկրի համար կենսական նշանակություն ունի, ուստի ուրախ ենք, որ հնարավորություն ունենք մեր ավանդը ներդնել էկոնոմիկայի զարգացման գործում»,- հայտարարեցին ընկերությունում:

- TBC-ն ակտիվորեն շարունակում է կորպորատիվ գործարարության աջակցությունը: Մենք համավարակի պայմաններում անգամ չդադարեցրինք նախագծերի ֆինանսավորումը: Այսօր մայրաքաղաքի երկու գլխավոր մուտքերում «Մակդոնալդսի» կողմից երկու նոր ռեստորանների բացումը այն բանի հիանալի օրինակն է, որ «Մակդոնալդսի» հետ մեր համագործակցությունը, անկախ ճգնաժամից, հաջողությամբ շարունակվում է: Վերջին երեք տարիների ընթացքում Վրաստանում բացվել է «Մակդոնալդսի» յոթ նոր ռեստորան եւ հուսով ենք, որ համատեղ կիրականացնենք շատ հետաքրքիր նախագծեր,- հայտարարեց TBC բանկի գլխավոր տնօրենի տեղակալ Գիորգի Թխելաձեն:

«Մակդոնալդսի» ռեստորանների պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ օգոստոսի 17-ին, Կախեթիի խճուղում գտնվող ռեստորաններում:

Ռեստորանների առաջատար գլոբալ «Մակդոնալդս» ցանցը գործում է աշխարհի 119 երկրներում եւ առօրյա սպասարկումներ է մատուցում շուրջ 68 միլիոն մարդու: Վրաստանում «Մակդոնալդսի» առաջին ռեստորանը բացվեց 1991 թվականի փետրվարի 5-ին եւ այսօրվա դրությամբ, Վրաստանի տարածքում գործում է 18 նման օբյեկտ:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՔՆՆԱՐԿՎԵՑ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

***Օգոստոսի 19-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը տեսազանգով կապվեց Ասիական զարգացման բանկի նախագահ Մասացուգու Ասագավայի հետ:***



Նիկոլ Փաշինյանը շնորհավորեց Մասացուգու Ասագավային՝ ԱԶԲ նախագահի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ եւ հրավիրեց այցելել Հայաստան՝ համավարակի ավարտից հետո: Վարչապետը նշեց, որ բանկը Հայաստանի հուսալի գործընկերներից է, եւ երկրում տարբեր՝ տրանսպորտի, էներգետիկայի, քաղաքաշինության, առողջապահության եւ կրթության ոլորտներում համատեղ իրականացվող ծրագրերը, ՀՀ մասնավոր հատվածի զարգացմանը ցուցաբերվող աջակցությունը վկայում են գործընկերության արդյունավետության մասին:

Վարչապետը եւ ԱԶԲ նախագահը քննարկեցին Հայաստանի կառավարության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ համագործակցության օրակարգի հարցեր: Զրուցակիցները մտքեր փոխանակեցին Հայաստանում կորոնավիրուսի համավարակի հետ կապված ընթացիկ իրավիճակի, դրա տնտեսական եւ սոցիալական հետեւանքների հաղթահարման ուղղությամբ տարվող քաղաքականության, այս համատեքստում գործակցության հեռանկարների շուրջ:

Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտնեց ԱԶԲ նախագահին՝ աջակցության պատրաստակամության համար եւ նշեց, որ Հայաստանի կառավարությունը համավարակից հետո տնտեսության վերականգնման միջոցառումների փաթեթ է մշակում, որոնց իրականացման գործում մեծապես կարեւորում է միջազգային գործընկերների, այդ թվում՝ ԱԶԲ հետ համագործակցությունը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ՝ ԿԱՊԻՏԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՆԱՄՅԱՆԻՆ

***Հայաստանի նախագահի հրամանագրով, վարչապետի միջնորդությամբ, կապիտան Ռուբեն Սանամյանը պարգեւատրվել է Հայրենիքի շքանշանով՝ արժանանալով Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչմանը: Կապիտան Սանամյանը, որպես սպա եւ հրամանատար, հայրենիքի պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում ցուցաբերել է բացառիկ արիություն, անչնորհություն եւ խիզախություն:***

***Նախագահի նույն հրամանագրով հայրենիքի սահմանները պաշտպանելիս դրսեւորած անչնորհության, մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած խիզախության եւ հմտության համար Հայաստանի պաշտպանության նախարարության եւս 199 զինծառայողներ պարգեւատրվել են Հայաստանի պետական պարգեւներով:***

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

***Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կարծիքով, կառավարության անդամ նախարարներն ու մարզպետերը պետք է ստանան արժանապատիվ վարձատրություն:***

Այս մասին Փաշինյանն ասել է օգոստոսի 17-ին «Ֆեյսբուք»-ի իր էջի ուղիղ եթերի ընթացքում:

- Ճիշտ են անում, որ ստանում են: Դա իմ որոշումն է եղել, դա ճիշտ որոշում է, եւ մեր նախարարները, կառավարության անդամները պետք է ստանան արժանապատիվ վարձատրություն: Հայաստանի ժողովուրդը պետք է ուրախանա, որ Հայաստանում գործում են նախարարներ, որոնք այդ պարգեւավճարի կարիքն ունեն, որոնք թալանով չեն զբաղված,- ասել է Փաշինյանը:

Վարչապետը նշել է, որ, եթե նախարարներից կամ մարզպետերից մեկը որոշի թալանով զբաղվել, խստորեն կպատժվի:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՎԵԼ ԵՆ

***Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի պարետի որոշմամբ՝ մշակութային, հանրային սննդի, կրթության եւ այլ ոլորտներում մեղմացվել են մի շարք սահմանափակումներ՝ նոր կանոններ են սահմանվել գրադարանների, թանգարանների, հանրային սննդի կետերի եւ կրթական հաստատությունների համար:***

Պարետի նոր որոշմամբ՝ թույլատրվել է կինոֆիլմերի ցուցադրումը, սակայն, միայն բացօթյա տարածքներում, թույլատրվել է հարսանիքների, հանդիսավոր միջոցառումների համար սրահների տրամադրումը, պայմանով, որ միջոցառման մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 40-ը, իսկ, ուղեկցող ֆոնային երաժշտությունից զատ, կենդանի կամ վերարտադրված երաժշտության մատուցմամբ կատարումները, ինչպես նաեւ՝ սոցիալական սերտ շփում ենթադրող այլ միջոցառումները, այդ թվում՝ պարերը, ժամանցի եւ զվարճանքի այլ գործողությունները թույլատրվում են բացառապես բացօթյա տարածքներում:

Մեղմացվել են նաեւ հեռուստատեսային հաղորդումների ժամանակ դիմակի կրման պահանջները:

Այսուհետ դիմակ կարող են չկրել հեռուստահաղորդավարները, եթե հեռուստահաղորդումների եւ հեռուստածրագրերի հեռարձակման ժամանակ հեռուստատեսային տաղավարում գտնվում են մենակ եւ հեռուստահաղորդումների հեռարձակման ժամանակ սուրդոթարգմանություն իրականացնող մասնագետները:

Մեղմացումների ամբողջական ցանկը հրապարակված է կառավարության պաշտոնական կայքում՝ պարետի որոշման մեջ:

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ ՄԵՆԿՅԱՆ ՏԱՐԵԳԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

***Օգոստոսի 21-ին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ծննդյան 69-րդ տարեդարձի առիթով շնորհավորական ուղերձներ հղեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ նախագահ Արմեն Սարգսյանը:***

***Հիշեցնենք, որ Գարեգին Երկրորդը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց 1997 թվականին, արժանահիշատակ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանից հետո: Մինչ այդ, նա կաթողիկոսական փոխանորդն էր եւ Արարատյան թեմի առաջնորդը:***

## ԵՐԱԳՐՎՈՒՄ Է ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

***Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը Ֆեյսբուքյան իր էջում գրել է.***

***«Սփյուռքի ուսուցիչները կվերապատրաստվեն նաեւ այս տարի, քովիդը խոչընդոտ չէ: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հայտարարում է սփյուռքում գործող հայկական եւ հայկական բաղադրիչով ուսումնական հաստատությունների (պետական եւ ոչ պետական վարժարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, լրացուցիչ կրթության հաստատություններ, մեկօրյա կրթօջախներ, մշակութային կենտրոններ եւ այլն) մանկավարժների վերապատրաստման ծրագրի մեկնարկը:***

***2020թ. վերապատրաստման դասընթացները կանցկացվեն հեռավար ֆեւաչափով՝ 2020թ. օգոստոսի 25-ից հոկտեմբերի 23-ը»:***

## ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ

***Օգոստոսի 20-ին, Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գլխավորությամբ, կառավարությունում կայացավ քննարկում հայրենադարձության վերաբերյալ:***

Փոխվարչապետն ընդգծել է, որ պետք է ապահովել հայրենադարձների համար արդեն իսկ առկա տարբեր ծրագրերի փոխգործելիությունը, անհրաժեշտության դեպքում ստեղծել նորերը եւ արդյունքում՝ մեկ միասնական փաթեթ մշակել: Ծրագրերը պետք է ունենան թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ բաղադրիչ:

Հանդիպման մասնակիցները անդրադարձել են հայրենադարձների կարիքների գնահատմանը, հավանական խնդիրների բացահայտմանը եւ դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսների ներգրավմանը:

Քննարկվել են հայրենադարձների կացությանը, կրթությանը, առողջապահությանը, տնտեսական գործունեության ծավալմանը վերաբերող հարցեր:

## ՍԵՎՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ՀՂԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ

***Սեւրի դաշնագիրը ստորագրած պետությունների երիտասարդական քաղաքական կազմակերպությունները հայ ժողովրդին հատուցման կոչ են ուղղել Թուրքիային:***

ՀՅԴ Բյուրոյի Երիտասարդական գրասենյակը, Սեւրի դաշնագրի ստորագրության 100-ամյակի առիթով, նախաձեռնել է՝ դաշնագիրը ստորագրած պետությունների երիտասարդական միությունների հետ, համատեղ հայտարարության հրապարակում, որտեղ, մասնավորապես, ասված է.

«Սեւրի դաշնագիրը հանդիսանում է միակ իրավական միջազգային փաստաթուղթը, որն ապահովում է Հայոց Ցեղասպանության արդար հատուցումը, այն ստորագրվել է Առաջին Համաշխարհային պատերազմից հետո՝ 1920-ին Փարիզի խաղաղության վեհաժողովի ընթացքում Դաշնակից ուժերի եւ Թուրքիայի միջեւ: Հիմք ընդունելով այն բանաձեւը, որը միաձայնությամբ ընդունվել է Երեւանում Ընկերվարական Երիտասարդական Միջազգային Միության համաշխարհային խորհրդի ժողովին (2015), որը դատապարտում է Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը.

Մենք՝ Սեւրի դաշնագիրը ստորագրած երկրների կամ նրանց իրավահաջորդ պետությունների ընկերվարական եւ ընկերվար-ժողովրդավարական երիտասարդական կազմակերպություններս, վերահաստատում ենք Սեւրի պայմանագրի կարեւորությունը եւ կոչ ենք անում Թուրքիային ձեռնարկել Հայոց ցեղասպանության հետեւանքների վերացման քայլեր եւ սկսել հայ ազգի իրավունքների վերականգնման գործընթացը»:

Նշենք, որ Առաջին աշխարհամարտի ավարտից 2 տարի անց, Թուրքիայի սուլթանական կառավարության եւ պատերազմում հաղթած պետությունների՝ այդ թվում Հայաստանի միջեւ 1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սեւր արվարձանում կնքվել է հաշտության պայմանագիր, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության տարածքը պետք է կազմեր 160 հազար քմ:

## «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՐՔԵՐ 2020» ՄՐՑԱՆԱԿԸ՝ ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆԻՆ

***«Խաղաղության գրքեր 2020» մրցանակի թեկնածուի ընտրության հանձնաժողովը այս տարի որոշել է մրցանակը հանձնել իրանահայ հայտնի կոմպոզիտոր, երաժիշտ Լորիս Ճգնավորյանին: Մրցանակը կհանձնվի մաեստրոյին Իտալիայի մայրաքաղաք Հռոմում սեպտեմբերի 12-ին:***

***«Խաղաղության գրքեր» (The Books for Peace Award) մրցանակը մեքսիկացի լրագրող Խավիեր Վալդեսի հիշատակին նվիրված միջազգային մրցանակ է: Սկսած 2017 թվականից այս մրցանակն ամեն տարի շնորհվում է խաղաղության տարածման եւ մարդասիրական ծրագրերում ներգրավված մարդկանց եւ խմբերի:***

***Լորիս Ճգնավորյանը իրանահայ աշխարհահռչակ դիրիժոր եւ կոմպոզիտոր է, դասական երաժշտության ավելի քան 70 կատարումների, 4 օպերայի եւ 6 սիմֆոնիայի հեղինակ: Եղել է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարը եւ գլխավոր դիրիժորը:***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՕԳՈՍՏՈՍ

*25.08.2020 Սուրբ Հովակիմի եւ Աննայի՝ Սուրբ Աստվածածնի ծնողների եւ Յուղաբեր կանանց հիշատակության օր*

*27.08.2020 Սուրբ Երեմիա մարգարեի հիշատակության օր*

*29.08.2020 Սուրբ առաքյալների՝ Հակոբոսի եւ Շմավոնի հիշատակության օր*

*29.08.2020 Սուրբ առաքյալ Թովմասի հիշատակության օր*

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԾԱԼԿԱՅՈՒՄ ՆՈՐ ԳԱԶԱՏԱՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԳՆԵՑՎԵԼ Է

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի մշակութային ժառանգության պաշտպանության ազգային գործակալությունը, Ծալկա-Մանգլիսի նոր մայրուղային գազատարի անցկացման ժամանակ, վնասվել են հնագիտական հուշարձանները:***

Անտառազուրկ Ծալկայի համար գազատարի անցկացումը կենսական նշանակություն ունի: Թեպետ, ինչպես նշեց Վրաստանի ազգային թանգարանի հնագիտական կենտրոնի աշխատակից, պրոֆեսոր Գոդերձի Նարիմանիշվիլին, գազատարի շինարարության արդյունքում վնասվել են բրոնզե դարի դամբարանները: Պրոֆեսորի խոսքով՝ պատվիրատու ընկերությունը՝ ճյուղային գերատեսչությունների հետ գազատարի շինարարության նախագիծ,ը չի համաձայնեցրել:

Ներկա դրությամբ գազատարի շինարարությունը կանգնեցված է, տեղում աշխատում են գործակալության ներկայացուցիչները: Մասնագետները մանրամասն ծանոթացան շինարարության արդյունքում վնասված օբյեկտներին: Մոտ ժամանակներում «Վրացական գազատրանսպորտային» ընկերությունը գերատեսչության հետ կհամաձայնեցնի այն պայմանները, որոնց պահպանման դեպքում հնարավոր կլինի վերսկսել շինարարական աշխատանքները: Նշենք, որ, հնագիտական ուսումնասիրություններից ելնելով, վերոնշյալ պայմանները մշակվելու են:

## ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԲՈԼՈՐԻՆ

*Շտապ բժշկական օգնություն* - 112
*Պարեկային ոստիկանություն* - 112
*Հրշեջ փրկարար ծառայություն* - 112
*Հրշեջ փրկարար օպերատիվ ծառայություն* - 01, 011, 275-20-85, 241-17-71
*Պահակային ոստիկանություն* - 125
*Գլխավոր տեսչություն* - 126
*Տեղեկատու բյուրո* - 118 08
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - 2-72-22-22
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - 15-05
*ՂազՏրանսԳազ տեղեկատվական ծառայություն* - 114, 240-40-04
*Գազի վթարային ծառայություն* - 04, 274-86-27, 274-89-04
*ԹԷԼԱՍԻ թեժ գիծ* - 277-99-99
*Ջրամատակարարման թեժ գիծ* - 293-11-11

## ՆՈՐՈՒՅԹ

# ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ՝ ԱՆՎՃԱՐ, ՄԻՆՉԵՎ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ը

***Քաղաքացիների որոշակի կատեգորիաների համար նախատեսված անձը հաստատող անվճար նոր վկայական տրամադրելու ակցիան շարունակվում է:***

- Ակցիայի նպատակն է՝ առավել կատարելագործել ընտրական ցուցակները, հուսալի ու որակավորված էլեկտրոնային անձը հաստատող վկայականների տրամադրումը: Այս ակցիան վերաբերում է մարդկանց որոշակի կատեգորիաների, մասնավորապես, նրանց, ովքեր չունեն վավեր էլեկտրոնային փաստաթուղթ, եւ նրանց, որոնց փաստաթղթերի վավերականության ժամկետը կլրանա մինչեւ նոյեմբերի 1-ը,- ասում է քաղաքացիական ծառայության զարգացման-գործակալության նախագահ Զուրաբ Սանիկիձեն:

Քաղաքացիների անձը հաստատող վկայականների անվճար տրամադրման ակցիան ընթանում է 2019 թվականից եւ կշարունակվի մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 1-ը:

## ՖՈՒՏԲՈԼ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԾՐԱԳՐՎԱԾ Է, ԹԵՊԵՏ ՕՐԸ ԴԵՌ ՉԻ ՀԱՍՏԱԿԵՑՎԱԾ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ֆուտբոլի Ազգերի լիգայի 2020-2021 թվականի մրցաշարում, Վրաստանի թիմը, Հայաստանի, Էստոնիայի, Հյուսիսային Մակեդոնիայի թիմերի հետ միասին, ներառված է C-2 խմբում եւ առաջին հանդիպումը անց էր կացվելու հոկտեմբերին՝ Հայաստանում:

Ներկայումս, կորոնավիրուսի համավարակի պայմաններում, մրցաշարի ժամանակացույցը փոխվել է: Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Լեւան Կոբիաշվիլու խոսքով, հանդիպման ժամկետի հարցը կորոշի ՈՒԵՖԱ-ն:

- Ինչպե՞ս կկազմակերպվի արտագնա հանդիպումը Հայաստանի հետ, որտեղ բարդ համաճարակային վիճակ է: Կա՞ տարբերակ, որ Հայաստանի հետ առաջին խաղը հետաձգվի կամ առաջին խաղն անցկացվի Վրաստանում,- ասաց Լեւան Կոբիաշվիլին:

### ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ՝ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՀԵՆՑ ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Չեմպիոնների լիգայի առաջին ընտրական փուլը անհաջող սկսեցին եւ մրցաշարից դուրս մնացին Վրաստանի չեմպիոն Թբիլիսիի «Դինամո» եւ Հայաստանի չեմպիոն «Արարատ Արմենիա»:

Կորոնավիրուսի համավարակի կապակցությամբ՝ միայն մեկական խաղերով սահմանափակվող մրցաշարի առաջին փուլում, Թբիլիսիի դինամոյականները սեփական հարկի տակ 0:2 հաշվով զիջեցին Ալբանիայի չեմպիոն «Տիրանային», իսկ «Արարատ Արմենիան», նույնպես սեփական դաշտում, լրացուցիչ ժամանակում նվազագույն 0:1 հաշվով պարտություն կրեց կիպրական «Օմոնիա»-ից:

### ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ 12 ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Ֆուտբոլի Եվրոպայի հոբելյանական առաջնությունը, որը հետաձգվել էր մեկ տարով, կանցկացվի 12 քաղաքներում, ինչպես նախապես պլանավորված էր:

ՈՒԵՖԱ-ի մամուլի ծառայության տեղեկատվությամբ՝ բոլոր հյուրընկալող քաղաքները՝ Լոնդոնը, Մյունխենը, Սանկտ Պետերբուրգը, Բաքուն, Հռոմը, Բուխարեստը, Դուբլինը, Կոպենհագենը, Բիլբաոն, Գլազգոն, Բուդապեշտն ու Ամստերդամը, տվել են իրենց համաձայնությունը հաջորդ տարվա համար:

Եվրոպայի առաջնության 60-ամյակի կապակցությամբ՝ մրցաշարը կմեկնարկի 2021 թվականի հունիսի 11-ին եւ կեզրափակվի հուլիսի 11-ին:



Վրաստանում Հայաստանի դեսպանությունը խոր վշտով ընկալեց դեսպանության աշխատակից ***Կարեն Աշոտի ԽԱՍԽԱՍՅԱՆԻ*** վաղաժամ մահը եւ իր ցավակցությունն է հայտնում հանգուցյալի ընտանիքին եւ մերձավորներին:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Խորհրդային մաթեմատիկոս, երկրաֆիզիկոս Օտտո ...: 7.Հայոց թագավոր, թագավորական տոհմի հիմնադիր: 9.Ինքնավար մարզ Վրաստանում: 10.Աթեիստ: 13.Քաղվածք, մեջբերում: 14.Հովիտ, օազիս: 18.Երգիծաբան Վլադիմիր ...: 19.Ձիերի խումբ: 22.Անալի: 26.Տուրցխեցի (Ախալքալաքի) գրող Գուրի ...: 27.Երկար, սովորաբար՝ լայն եւ ուղիղ փողոց: 28.Հոլանդացի ծովագնաց ... Տասման: 31.Քաղաք Բրազիլիայում: 33.Եթովպիայի մայրաքաղաքը Ադիս-...: 36.Իրագործում: 38.Գետ Արցախում: 41.Պարտեզի այն մասը, որտեղ աճեցնում են սերմերը՝ հետո ուրիշ տեղ փոխադրելու համար: 42.Ծառի սածիլ: 45.Սուտ խոսել: 46.Հաստ ձայն: 49.Չռված, լայնորեն բացված: 50.Ազդագիր, ծանուցագիր: 51.Քաղաք Դաշտային Կիլիկիայում: 52.Հյուղակ, խրճիթ: 53.Քաղաք պատմական Արեւմտյան Հայաստանում: 54.Ցածի մասը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ավստրիացի երգահան ... Շուբերտ: 2.Անդրավարտիք, սռնազգեստ: 3.Նվիրակ: 5.Աշխատասեր միջատ: 6.Կարուձեւ անող արհեստավոր: 8.Խոշոր եղջերավոր անասունների հոտ, խումբ: 11.Մազի ներկ: 12.Անհոսք աղի լիճ Հայկական լեռնաշխարհում: 14.Մեծ օձ: 15.Տավարած, հովիվ: 16.Եվրոպական հին ոսկե դրամ: 17.Առասպել, ավանդույթ: 20.Հայդուկապետ Սեբաստացի ...: 21.«Ճառ ասե՞մ, թե՞ զանգ ...»: 23.Պոչ չունեցող: 24.Իսպանական շան տեսակ ... Սպանիել: 25.Իրաքում հարգի անուն: 29.«Ձրի ..., ջրի տարած»: 30.Անորակ, փչացած ձու: 32.Կիեւի մեծ իշխան Յարոսլավ ... (1019-1054): 34.Ճակատագիր: 35.Պետություն Աֆրիկայում ...-Ֆասո: 37.Հիմա: 39.Թակարդ: 40.Փոքրիկ Ռուբենը: 43.Լեռ Հայկական լեռնաշխարհում, Ծաղկանց լեռներում: 44.Ընտանի կենդանի: 47.Գետ Ռուսաստանում: 48.Տղամարդկային ամենացածր ու թավ ձայն:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Մկրտչյան: 5.Շանթ: 8.Երերուն: 11.Մեքենա: 13.Սերտ: 14.Գեր: 15.Սեղա: 16.Նեմո: 17.Ումպ: 18.Ել: 19.Եր: 20.Նիստ: 21.Ոսկ: 23.Երբ: 25.Վարդան: 28.Խաբել: 30.Անթերի: 32.Արի: 33.Ացի: 34.Սոս: 36.Սանիկ: 37.Ակո: 38.Սանա: 41.Քնար: 42.Լո: 44.Լավա: 45.Շվի: 47.Լալա: 48.Սառա: 50.Սատր: 51.Աղավնի: 52.Քուրդ: 53.Ստոր: 54.Ասիա: 55.Ակնա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Մաեստրո: 2.Տերտեր: 3.Յանգոն: 4.Նեմրութ: 6.Նանսեն: 7.Հունաստան: 9.Ռե: 10.Երնեկ: 12.Ալելիտա: 22.Վալիկո: 23.Ենթամնա: 24.Բերիա: 25.Վերիկո: 26.Դավոս: 27.Ան: 28.Խասփուշ: 29.Բանալի: 31.Եց: 34.Սինգապուր: 35.Սուրհանդակ: 39.Ալաստան: 40.Ավետիս: 43.Գալինա: 46.Վաղես: 49.Ավիա: 52.Քող:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445